Կարգապահական գործ թիվ ԿԳ-18148

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2019 թվականի մայիսի 22-ի թիվ 93-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/59-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԿԱՐԵՆ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Տիգրան Խուրշուդյանի, Խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Գայանե Դեմիրչյանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Մեժլումյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Կարեն Քալանթարյանին (արտոնագիր թիվ 909) (**այսուհետ նաև՝ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Սլավչո Նենկովը **(այսուհետ նաև՝ Դիմող)** դիմելով Պալատ, ըստ էության հայտնել է, որ 23.01.2017 թվականին պայմանագիր է կնքել «ՔԵՅ ԸՆԴ ՋԻ ԼՈՈՒ ՖԻՐՄ»ՍՊԸ–ի հետ, ի դեմս տնօրեն՝ Կարեն Քալանթարյանի: Նշված պայմանագրի համաձայն ծառայությունները մատուցվելու և իր իրավունքները պաշտպանվելու էին փաստաբան Կարեն Քալանթարյանի կողմից քրեական և քաղաքացիական գործերի շրջանակներում:

Ըստ Դիմողի՝ ինքը ներկայումս տեղյակ չէ, որ փուլում են գտնվում իր գործերը, քանի որ փաստաբան Կարեն Քալանթարյանն իր հեռախոսազանգերին և նամակներին չի պատասխանել և ճշգրիտ տեղեկություն չի տրամադրել իր գործերի վերաբերյալ:

Դիմումին կից ներկայացվել է ծառայությունների մատուցման պայմանագրի պատճենը, իրավաբանական ծառայությունների համար վճարման վերաբերյալ անդորրագրերի պատճենը, ինչպես նաև փաստաբան Կարեն Քալանթարյանի հետ viber հավելվածով կատարված հաղորդագրությունների պատճենները:

2. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 27.11.2018թ. թիվ 412-Ա/ԿԳ-18148 որոշմամբ փաստաբան Կարեն Քալանթարյանի

(արտոնագիր թիվ 909) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագրքի)** 2.7.2, 3.1.8 և 3.6.1 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով:

30.11.2018թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Մարինե Թովմասյանին **(այսուհետ նաև՝ Նախապատրաստող)**:

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

3.1. <u>Դիմողի համառոտ բացատրությունը.</u>

21.01.2019 թվականին Դիմողը ներկայացրել է գրություն, որով հայտնել է, որ իր դիմումից հետո փաստաբանի վարքագիծը չի փոխվել և դա միայն ի վնաս իրեն է աշխատել և ֆինանսական վնաս է պատճառել, նա նշել է նաև, որ նոր հանգամանքներ են երևան եկել, քանի որ Քալանթարյանն իր բազմաթիվ խնդրանքներին և հորդորներին չի քննարկել իր հետ իր գործերը և չի ստացել որևէ տեղեկություն՝ ինքը ստիպված է եղել կնքել այլ պայմանագիր նոր իրավաբանական ընկերության հետ, որի համար վճարել է, որպեսզի ստանա իր գործերի վերաբերյալ տեղեկություն և փաստաթղթերը:

Դիմողը ներկայացրել է իր և փաստաբան Կարեն Քալանթարյանի միջև տեղի ունեցած խոսակցությունների էլեկտրոնային տարբերակը:

Դիմողը թեև պատշաճ ծանուցվել էր կարգապահական նիստի վայրի, օրվա և ժամի մասին, սակայն Խորհրդի նիստին չի ներկայացել և բացատրություն չի տվել:

3.2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

20.11.2018 թվականին փաստաբան Կարեն Քալանթարյանը ներկայացրել է բացատրություն, որով հայտնել է, որ իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակներում դիմումատուի շահերը պատշաճ կարգով ներկայացվել են ՀՀ պետական և ոչ պետական տարբեր մարմիններում:

Փաստաբան Կարեն Քալանթարյանը հայտնել է նաև, որ Դիմողի կողմից նշված տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը, քանի որ Դիմողին ի սկզբանե պատշաճ կարգով տրամադրվել է բոլոր այն տեղեկություններն ինչը վերաբերել է Դիմողի գործերին, ավելին՝ Դիմողը երկու անգամ եկել է Հայաստան, ինչի արդյունքում անձամբ տեղեկացել է իր գործի ընթացքի մասին, բացի դա պարբերաբար հեռախոսազանգերի միջոցով Դիմողը ստացել է իր բոլոր հարցերի պատասխանները:

Փաստաբան Կարեն Քալանթարյանը բացատրությանը կից ներկայացրել է էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկված հաղորդագրությունների պատճենները:

10.04.2019 թվականին Պատասխանողը ներկայացրել է դիմում, որով հայտնել է, որ չի կարող ներկա գտնվել 10.04.2019 թվականին նշանակված կարգապահական գործով ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի նիստին, ուստի խնդրել է Խորհրդի նիստն անցկացնել իր բացակայությամբ, հիմք ընդունելով՝ նախապատրաստողին հայտնած և տրամադրած փաստերը:

Պատասխանողը թեև պատշաճ ծանուցվել էր 22.05.2019 թվականին նշանակված կարգապահական նիստի վայրի, օրվա և ժամի մասին, սակայն Խորհրդի նիստին չի

ներկայացել և բացատրություն չի տվել:

3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական վարույթի շրջանակներում վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>

30.01.2019թ. կարգապահական վարույթի գործը նախապատրաստող անձ Մարինե Թովմասյանը կազմել է եզրակացություն: Նախապատրաստողը նշել է, որ իր կողմից ուսումնասիրվել է Կողմերի միջև կնքված փաստաբանական ծառայություններ մատուցելու մասին պայմանագիրը (պատճենի տեսքով) Կողմերի միջև ինչպես էլեկտրոնային նամակագրության բովանդակությունն ու ժամանակագրությունը, այնպես էլ «Viber» կապով վերջիններիս միջև տեղի ունեցած գրագրությունն ու զանգերի առկայությունը, որով փաստվում է, որ Կողմերը 2017 թվականի հունվար ամսից մինչ 2018 թվականի օգոստոս ամիսը, գրեթե մշտապես, գտնվել են քննարկումների մեջ: Առկա նամակագրության բովանդակությունները վերաբերվում են ինչպես քրեական, այնպես էլ՝ քաղաքացիական գործերի ընթացքին: Նշված հանգամանքով փաստվում է նաև, որ Դիմողն իրազեկված է իր խնդիրների վերաբերյալ հարուցված թե քրեական և թե քաղաքացիական գործերի վարույթներին, անգամ գործին շնորհված համարներով, դատախազների անուններով, դատախազության էլեկտրոնային հասցեով: Դիմողը փաստաբանին խնդրել է իրեն տրամադրել անհրաժեշտ նյութեր, որոնք, ըստ գրագրության, փաստաբանի կողմից տրամադրվել են: Դիմողը խնդրել է նաև իրեն տրամադրել փաստաթղթերի թարգմանված օրինակները, որի դիմաց պարտավորվել է կատարել վճարումներ:

01.02.2019թ. գործը հանձնվել է Խորհրդին:

Խորհրդի նիստերը տեղի են ունեցել 13.03.2019թ. ժամը՝ 18:30-ին, 10.04.2019թ. ժամը՝ 18:30-ին, 22.05.2019թ., ժամը՝ 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» **(այսուհետ նաև՝ Կարգ)** 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1. Դիմողի և Պատասխանողի միջև 23.01.2017 թվականին կնքվել է փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր:
2. Պայմանագրի գինը սահմանված է եղել՝ 400.000 ՀՀ դրամ:
3. Պայմանագրով կատարողը պարտավորվել է Պատվիրատուին մատուցել հետևյալ ծառայությունները. Պատվիրատուի, որպես «ՄԵՆԵՋՄԵՆՏ ՍԻՍԹԵՄՍ ԸՆԴ ԲԻԶՆԵՍ ՔԸՆՍԱԼԹՆԹՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակցի, անունից, վերջինիս կողմից տրված լիազորագրի շրջանակներում հանդես

գալու «ՄԵՆԵՋՄԵՆՏ ՍԻՍԹԵՄՍ ԸՆԴ ԲԻԶՆԵՍ ՔԸՆՍԱԼԹՆԹՍ» ՍՊ Ընկերությունում, հետաքննության և նախաքննության մարմիններում, որպես տուժողի, վկայի/ այդ թվում այլ ցանկացած դատավարական կարգավիճակով, Հայաստանի Հանրապետության բոլոր բանկերում, ստանալու բանկային քաղվածքներ, բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ, Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի համապատասխան ստորաբաժանումներում, հանդես գալու բոլոր դատական ատյաններում, ՀՀ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության մարմիններում, կատարելու դատավարական գործողություններ պատվիրատուի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատկով:

Նշված փաստերը հաստատվում են 23.01.2017թ. փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրի պատճենով:

4. Դիմողը փաստաբանի ծառայությունների համար կատարել է վճարում:

Նշված փաստը հաստատվում է 07/02/2017 թվականի թիվ 170207054020002 անդորրագրի պատճենով:

5. Փաստաբան Կարեն Քալանթարյանը, որոշակի պարբերականությամբ պատասխանել է Դիմողի հարցերին և տեղեկացրել իր գործի ընթացքի մասին:

Նշված փաստը հաստատվում է Դիմողի և Պատասխանողի միջև Viber հավելվածով և էլեկտրոնային փոստով տեղի ունեցած խոսակցությունների պատճեններից:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Կարեն Քալանթարյանի (արտոնագիր 909, ստացված՝ 24.10.2009թ.) նկատմամբ 2015-2019թթ. ընկած ժամանակահատվածում կարգապահական վարույթ չի հարուցվել (չհաշված սույն կարգապահական գործը):

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Կարեն Քալանթարյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

Կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Կանոնագրքի 3.1.8 ենթակետի համաձայն՝ *փաստաբանն իրավական օգնություն ցույց տալու հանձնարարությունը չպետք է ընդունի, եթե զբաղվածության կամ որևէ այլ պատճառով չի կարող ապահովել հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը:*

Կանոնագրքի 3.6.1 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:*

Նշված կանոններով փաստաբանի համար սահմանվում են պարտականություններ, այն է՝ ելնել վստահորդի նպաստավոր շահերից և

բարեխղճորեն և ժամանակին պաշտպանել վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը, տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին, պատասխանել վստահորդին հետաքրքրող հարցերին:

Խորհուրդն արձանագրում է, որ փաստաբանի կողմից ցուցաբերվող մասնագիտական և անձնական բարեխղճությունն իր վստահորդի և նրա գործի նկատմամբ չի կարող լինել բավարար՝ առանց իր վստահորդի հետ մշտական կամ պարբերական կապի, տեղեկատվության փոխանակման, գործի ընթացքի վերաբերյալ փաստաբանի կողմից վստահորդին անհրաժեշտ տեղեկությունների տրամադրման, գործի հնարավոր արդյունքի և վստահորդի քայլերի վերաբերյալ պատշաճ ջանասիրությամբ տրված խորհրդատվության: Այնուամենայնիվ Խորհուրդը հարկ է համարում արձանագրել, որ շատ դեպքերում Փաստաբանի և վստահորդի միջև կապը կարող է ընդհատվել կամ ոչ պարբերական լինել օբյեկտիվ պատճառներով: Մասնավորապես, սույն գործի հանգամանքներից բխում է, որ փաստաբան Կարեն Քալանթարյան պարբերաբար կապ է պահպանել Դիմողի հետ և վերջինիս տեղեկացրել իր գործի ընթացքի մասին, իսկ մի քանի դեպքերում չի պատասխանել հեռախոսազանգերին և նամակով տեղեկացրել, որ դատական նիստի է գտնվում ուստի ավելի ուշ կզանգահարի, ինչպես նաև թե էլեկտրոնային փոստով և թե viber հավելվածով պարբերաբար ուղակել է տեղեկատվություն իր գործի ընթացքի մասին: Հարկ է նաև նկատել, որ փաստաբան Կարեն Քալանթարյանը գործել է բարեխիղճ և կատարել պայմանագրով սահմանված պարտավորությունները, մասնավորապես՝ վերջինս պատվիրատուի իրավունքների և շահերի պաշպանության նպատակով բողոք է ներկայացրել Երևան քաղաքի դատախազություն, հայցադիմում է ներկայացրել առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան, ընդ որում հատկանշական է այն հանգամանքը, որ գործի քննությունը դեռևս շարունակվում է:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.8 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանների պալատի խորհուրդը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ հիմնավորված չէ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը:*

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Դիմողի կողմից սույն կարգապահական վարույթի ընթացքում չհիմնավորվեցին իր կողմից վկայակոչած հանգամանքները, ուստի Խորհուրդը գտնում է, որ չի հիմնավորվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը, հետևաբար սույն կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8. հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի պահանջներով՝ Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Կարեն Քալանթարյանի (արտոնագիր թիվ 909) նկատմամբ Կանոնագրքի 2.7.2, 3.1.8 և 3.6.1 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված թիվ ԿԳ-18148 կարգապահական վարույթը կարճել:

2. Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Տիգրան Խուրշուդյան

22 մայիսի 2019թ.
թիվ ԿԳ/59-Ա
ք. Երևան